26. ՀՈՐԹԱՐԱԾԻ ՀԵՔԻԱԹ

Կէղնի չէղնի, վախտի մեկին մի մարդ, մի կնիկ կէղնի։ Էս մարդն ու կնիկը շատ աղքատ են էղնում։ Մեկ տղա կունենան։ Մեկ էրկու, իրեք տարի կանցնի, մարդը կը մեռնի կը մնա մերն ու տղեն։ Տղան որ քիչըմ մեծնում է ամեն տարի դեղի հորթարածություն կանի։

Մեկ օր էլ հորթերը քշում դուզն է տանում, տեսնում է, որ արևի տակ մի բան փելփլում է, էրթում աշում է որ մի խըտուտիկ ղշի բմբուլ, վերցնում աշում է, որ էտ բմբուլի սիրունությունը մարդու խելքն է տանում։ Էլ չի ղմշում որ քցե, իրիկուն հետը բերում տուն, տալում է մորը ու ասում է.— Ատե՛, էս բմբուլը դուզը գտա, էսոր սիրունության համար վերցրի բերի տուն, առ պահիր, համա, ուրիշ մարդու ցուց չտաս։

Մերն էլ է զարմանում էտ բմբուլի սիրունության վրա, վերցնում դնում է էն կողմ, ղուտկի վրեն։

Իրիկուն որ մութը տալում է, ճրագի ժամանակ, մերն ու տղեն տեսնում են, որ բմբուլը ճրագի պես վառվում է, մթան լուս է տալում։

— Ատե, էս մեզի լավ էղավ, հազիր մենք քասիբ մարդ, ճրագ չենք կունա ամեն օր վառել, էս բմբուլը ճրագի տեղ մեզի լուս կ'տա, աստված խեղճ եկավ մեզի։ Ամա՛ էլի քեզի կասեմ, որ մարդու բան չասես։

— Ես յաղո՞ւզ եմ հալլին ասում, անջախ աստված մեզ տվեց։

Մի վախտ կ'անցնի, էտ երկրի թագավոր իրա Լալի հետ թարդիա-ղլրղ ելնում է իր երկրի մեջ ման գալու։ Գալում հասնում են էտ գեղը։ Չ'գիտեմ մոնց կէղնի բիրգան կ'մտնին հորթրճու տուն, կաշեն որ մի սիրուն խըտվուն ղշի բմբուլ ղրված է պատի ծակը։

Թագավոր ասում է Լալին.— Էսենց էլ սիրուն ղշի բմբուլ, Լա'լա, մարդու խելքն է տանում, աշապ չե՞ն ծախում, հարցնենք։

— Թագավոր ողղ լինի, դու ընձի լսե, մոնց որ կ'ասեն առ։ Էդ բմբուլը մեզ ժամանակին պետք գուքա։

Լալեն վերցնում ասում է հորթրճու մորը.— Քալե, դու քասիր մարդ եք, էդ բմբուլը ի՞նչ պիտի անեք, ծախեք մեզի, ձեզի բավական օսկի կտանք։ Հարուր օսկի կտամ էդ բմբուլին։

Հարուր օսկու անուն որ պառավը լսում է ոտները գետնից կտրրվում է։

— Տո՛ւր,— ասում է,— դավրեշ բաբա հարուր օսկի, ծախում եմ։

Թագավորն ու Լալեն առան բմբուլն ու դուրս էկան գեղից։

Իրկուն տղեն գալում է տուն, աշում է որ բմբուլը չկա։ Կոսե, մորը.— Ատե, ո՞ւր է բմբուլը։

Մերն ասում է.— Էրկու դավրեշ էկան, տեսան, հարուր օսկու ծախեցի դավրեշներին։

— Ատե՛, դու ի՞նչ բեգ ինսան ես, ես քեզի չասի, թե էտ բմբուլը դու զայ չանես։ Դու իմ գլխիս մի փորձանք պիտի բերես, լավ իմանաս, որ դու իմ գլուխը ծախեցիր։

Թագավորն ու Լալեն մե վախտ ման էկան երկրի մեջ, դարձան էկան թագավորի քաղաքը։

Մի օր Լալեն կոսե թագավորին.— Թագավոր սաղ էղնի. էս բըմբուլը որ էսքան սիրուն է՝ մութը տեղը լուս է տալում՝ հապա որ ըստոր ղուշը ձեռք բերես, մո՞նց լուս պիտեր տա։

— Լալա՛, լավ կոսես,— ամա, վեվ գիտե էստոր ղշի տեղ, որ վով էրթա բերե։ Թող էստուր ղուշը բերող էղնի, ի՛նչ ուզի կտամ, իր կշռնոտով օսկի։

— Թագավոր սաղ էղնի, էս բմբուլ գտնողից ղայրի օնչով չի կարա ըստուր ղուշը բերել։ Թե բերեց հորթրճին կը բերե՝ թե չէ օնչով չի կարա բերել։

Էգսի առավոտ թագավոր մարդ է ճամբում հորթրճուն կանչելու։ Թագավորի մարդը էրթում գտնում է հորթրճուն ու ասում.— Թագավոր քեզի հ'ուզում է։

Հորթրճին մոլրում մնում է, ասում է.— Թագավոր ինձի ինչ է կանչում. ես մի հորթրճի մոնց էլնիմ թագավորի երես։

Ասում է, ամա ի՞նչ կարա անել, էլնում էրթում է թագավորի մոտ։

Թագավորը տղին որ տեսնում է, ասում է.— Ա՜յ տղա, ես քեզի կանչել եմ, որ դու էրթաս էս բմբուլի ղուշը գտնիս բերես։

— Թագավոր ապրած կենա, ես մի քասիր հորթարած, ես ամո՞նց էրթամ էտ բմբուլի ղուշը գտնիմ բերեմ, ես ի՞նչ գիտեմ էդ ղշի տեղ։

— Ցաղո՞ւզ դու էս բմբուլը կարաս բերել ու ղշին չես կարալ։ Էտ իմ բանս չէ, մոնց բերում ես բեր, ես քեզնից ղուշն եմ ուզում, չբերես գլուխդ կը զարնեմ։

— Թագավոր ապրած կենա, ես հորթերը տարել էի դուզը արածելու, բիրղան գտա էտ բմբուլը, տեսա որ սիրուն, խետվուն բմբուլ է վերցի բերի տուն։ Ես ի՞նչ իմանամ թե ո՞րդից էր էկել ընկել էտ տեղ։

Լալեն վերցնում ասում է.— Անկարելի բան է տղա, թագավորի հրամանը գետին չի ընկներ, անձեն գնա ղուշը գտիր բեր, թե չէ գլուխդ կէրթա։

Տղան նիաթներ կախած դառավ էկավ տուն։ Մերը տեսավ որ տղեն էնենց է շահրեն թթվեցրել, որ լուն ընկնի երեսից հազար թիքա կլինի։

— Տղա՛, օրթի, ինչի՞ ես շահրեթ կախել, չլինի՞ մի գեշ բան է պատահել քեզի։

— Հա՜յ մեր, աստուծ քու բալետ տա, դու իմ գլուխը ծախեցիր։ Ես քեզ չասի որ էտ անտեր բմբուլը դուս չհանես։ Դու իմ խոսքը չլսեցիր ելար ծախեցիր դարվիշներին։ Դարվիշները մեր թագավորն ու իրա լալեն են եղել։ Հիմա թագավոր դրել է իմ վրեն թե. «Էս բմբուլի ղուշը, հ՚ուրդի որ ըլլի պիտի որ գտնիս բերես»։ Ես հիմի շվարել եմ, թե մոնց էրթամ, որդից գտնիմ բերեմ, որ թագավոր իմ գլուխը չը զարնե։

— Դե որ էտենց է օրդի, էլ շվտրելը փարա չի անում։ Գնա՛ հորողբորդ մոտ, հարցու, էն քեզի մի խելք կը սորվեցնե։

Տղան էլնում էրթում է հորողբոր մոտ, ասում է.— Հորողբե՛ր, էսպես մի փորձանք է անցել իմ գլխով. ի՞նչ անեմ։ Մի օր ես հորթերը տարել էի դուզը, էտ տեղ մի խետուն ղշի բմբուլ գտա, վերցրի տարա տուն։ Էդ բմբուլը մթան ճրագի պես լուս էր տալում, մորս ասի թե,-քա, լավ էղավ, հաղր մենք քասիր ենք, ճրագի ձեթ չենք

կրնա գնել, էս բմբուլը մեզի ճրագի տեղ լուս կ'տա։ Էլ որ մարդու բան չասես։ Մի օր էլ իրիկուն էկա տուն որ բմբուլը չ'կա, էնոր տեղ ճրագ է վառում։ Ասի, քա', ո՞ւր է բմբուլը, որ ճրագ ես վառում։ Ասավ. «Օրթի էրկու դարվիշ էկան, տեսան, հարուր օսկի տվեցին, ես էլ վերցի տվի էնոնց»։ Քիչմը հորսոտա, էլ ի՞նչ օգուտ, բանը անցել էր։ Դու մի ասեր էտ դարվիշները թագավորն ու իրա լալեն են եղած։ Հիմի ինձ կանչել են, որ որտից կ'ըլլի, ըլլի էտ բմբուլի ղուշը գտնիմ, բերեմ, թե չէ գլուխս կը զարնեն։ Հիմի դու գիտես, հորոդբեր ինձի մո՞նց պիտի պրծացնես էս փորձանքից։

— Դե՜հ, որ էտենց է,— ասում է հորոդբերը,— գնա թագավորին ըսե, թե. «Քու ձիանու մեջ մի հատ իրեք տարեկան լավ թայըմ կա, էն թայ տուր ինձի, ես էրթամ ղուշը բերեմ»։ Թայ որ կ'առնես, դառի արի իմ մոտ ես քեզի կոսիմ, թե ինչ կոնես։

Տղեն դառնում էրթում է թագավորի մոտ ու ասում է.— Թագավոր ապրած կենա, քու ձիաներու մեջ մի իրեք տարեկան թայըմ կա, էն թայը կ'տաս, ղուշը կարամ բերել, չիս տա, չեմ կարալ։

Թագավորը կոսե.— Գնա, մտիր ձիանոցը, հավնածդ թայը ա՛ռ գնա՛։

Տղան էրթում ձիերու միջից շոկում է իրեք տարեկան թայը, դառնում գալում է հորոդբեր մոտ։

— Բերի՞ր իմ ասած թայը,— ասում է հորոդբերը։

— Բերի,— կոսե տղան։

— Տեսնո՞ւմ ես էն դիմացի շուխտ սարը, որ իրար օղշում են տալում։ Ձին կը քշես կէրթաս էս կողմը մի մենծ ծառ կա, էն ծառի մոտ կիշնես, ձին լավ կը թիմրես, ղոլները լավ կը ժրես. սարը իրարուց բացվելու պես կը հեծնիս, էնպես ուժով ուզանկուլին կը զարնես, որ ձին կը թռնի, կ'անցի սարի էն էրեսը, հոն ձիուց կիշնիս, կը կապես ծառից, կէրթաս մեկ հ'էգի կա, հ'էգու կիսուն ծառըմ կա, էն ծառի վրեն ղուշը բուն է դրել։ Ղուշը քնած կըլլի բնի մեջ։ Գաղտուկ կելնես ծառի վրայեն կբռնես ու հետ կը դառնաս։ Քու հետևից կը բռան, կը ճվան, թե. «Հողածին տարավ հրեղեն, բռնեք հա բըռնեք», դու իսկի հետ չդառնաս, հետ դառար թե չէ քար կըլլնիս։ Էն սարերի էս կողմ էն կողմ ղարաղուլներ կանգնած, կացրները հ'ուսերին դրած, գիտես թե վրա են բերում քեզի զարնելու, դու հեչ էնոնց էրեսին մի աչեր, քո ձին անձեն քշիր անցի։ Քեզի էտ ձին կը փախցրնե, կազատե, ղուշն էլ կը բերես կ'ազատիս։

Հորթրճին ձին էյարեց, իրան հաց բան առավ, հեծավ ու քշեց դեպի սարերը։ Գնաց, գնաց, շատ ու քիչ աստուծ գիտե, հասավ էն

ծառի մոտ։ Իջավ ձիուց, ձին լավըմ թիմրեց, հաց կերավ դինջացավ, ելավ ղոլները ժրեց, հեծավ հազիր կեցավ։ Սարերը հետ գնացին թեչ, էնպես ուզանկին տվեց, որ ձիու կողերը յարա էղավ, թռավ անցավ սարի էն էրեսը, իջավ ձիուց, կապեց ծառից, տեսավ մի սիրուն կանանչ հ'էգի, սիրուն-սիրուն ծառեր, ռանգ-ռանգ ծաղիկներ, տեսակ-տեսակ ղշեր, բիլբուլներ, իսկ ադամի դրախտ։ Էստոնք որ տղեն տեսավ, բերանը մնաց բաց։ Գնաց մտավ հ'էգին, տեսավ հ'էգու կիսուն հորողբոր ասած մեծ ծառը, գողտուկ էլավ, ծառի վրայից բըռնեց ղշին՝ հետ դառավ, փախավ։ Քար ու փետ լեզու էլավ. «Տարա՜վ հա՜ տարա՜վ, հողածին հրեղենին տարավ, բռնեք հա՜ բռնեք, զարկեք հա՜ զարկե՜ք», տղեն հետ չը դառավ։ Հասավ ձիու մոտ, հեծավ ու փախավ։ Սարի մոտն էլ ղարաղուլներ կացըները բռնած ուզում էին վրա բերեն տղին, էն իսկի մտիկ չտվեց, քշեց ձին, անցավ սարի էս կողմ։ Հասավ ծառի մոտ, ձիուց իջավ, լավ դինջացավ, ձիուն թիմրեց, հաց կերավ, ելավ հեծավ, քշեց դեպի տուն։

Տղեն ղուշը տարավ տվեց թագավորին։ Թագավոր շատ ուրախացավ։

Թագավոր կանչում է իր Լալին ու ասում.— Լալա՛ տար էս տղին մի հարիկա օսկի տուր։

Լալեն տղին տանում է իր տուն, բերում հարիկա օսկին վերցնում է իրան, մեկ փարա է տալում տղին ու բերում նարդիվնի գըլխին, մեկ թագմիկ է տալում տղին, տղեն թանգիր-մանգիր գալում է նարդիվնի տակ, թևը կոտրվում է։ Ելնում փոռ փոշման էրթում է տուն, մորն ասում է.— Մեր, աստուծ քու բալեն տա, որ դու ընձի կրակը քցեցիր, էտքան չարչարանքից ու զահմաթից հետո թևս էլ կոտրեցին, հախս էլ էս մեկ փարեն էղավ, առ պահե։

Մի քանի ժամանակ անցնում է, տղի թևը լավանում է, հ'ելնում իրա համար ման է գալում դես-դեն։

Օրըմ թագավոր կոսե Լալին.— Լալա, ծովի մեջ իրեք հատ հուրի փերի աղջիկ կա, վեվ որ էրթա էն աղջիկներից մեկը ընձի բերե, իր կշռնոտով օսկի կը տամ։

— Թագավոր ապրած կենա,— կոսե Լալեն,— էն ղուշ բերող տղից ղայրի օնչով չի կարա բերել։ Էն որ ղուշը բերեց, աղջիկն էլ կարա բերել։

Թագավոր մարդ է ճամբում հորթրճու հետևեն։

Հորթրճին գալում, թագավորի մոտ գլուխ է տալում, կանգնում է։

Թագավորը կոսե տղին.— Տղա՛, ծովի մեջ իրեք հատ հուրի-

փերի աղջիկ կա, կէրթաս, էնոնցեն մեկը ընձի կը բերես։ Բերիր, քու կշռնոռով օսկի կը տամ, թե չը բերիր՝ գլուխդ կը զարնեմ։

Տղեն դառնում, գալում է տուն, մորն ասում է.— Մեր, աստուծ քու բալեն տա, որ դու ինձի կրակը քըցեցիր։ Հիմի էլ թագավոր կանչեր, ասում է. «Ծովի մեջ իրեք հատ աղջիկ կա, էնոնցեն մեկը ընձի բերիր՝ կը բերես, չբերիր՝ գլուխդ կը զարնեմ»։

— Դեհ, որ էտենց է, օրթի, աստուծն է մեզի էտ փորձանքի մեջ քցեր։ Էլի գնա՛ հորողբորդ մոտ, էն քեզի կաղատե։

Տղեն հ'ելնում էրթում է հորողբոր մոտ ասում է.— Հորողբեր, գու գիտե՛ս, ընձի աղատիր։ Թագավոր հիմի դրել է իմ վրեն, ասում է. «Գնա՛ ծովի մեջ իրեք աղջիկ կա, էնոնցեն մեկը ընձի բեր, թե չէ՝ գլուխդ կը զարկեմ»։

— Թե որ էտպես է կ'էրթաս թագավորին կոսես թե. «Լալեն իր փարով մեկ հատ օսկի գյամի պետք է ջինե, ինչքան որ քաղքին կնիկներ կան խաս-խաս ջորեր հագնին, յոթ ղաթ դահոլ զուռնա, բոլոր Լալի հաշվով, էրթանք ծովի մեջ չալղի անենք, պար բռնենք խաղանք, որ ծովի աղջկերքը դուռ գան որ բռնեմ, բերեմ»։ Էտից հետև դառի արի ինձ մոտ, ես նոր քեզի կասեմ, թե ինչխ կոնես։

Տղան դառնում էրթում է թագավորի մոտ, ասում է թագավորին.— Թագավոր ապրած կենա, Լալին ջինել կուտաս մի օսկե գյամի։ Քաղքի մեջ ինչքան որ կնիկներ կան թոմարին խաս-խաս ջորեր կռել[1] տա։ Օխտ ձեռք էլ դահոլ, զուռնա բռնե. էտ թոմարը Լալի փողով որ չ'լինի, չի լինի։ Կէրթանք ծովի մեջ, չալղի կոնենք, կնիկներ պար կը խաղան, աղջիկներ դուրս կելնեն, էն վախտ կը բռնեմ կը բերեմ։

Թագավորն ասում է.— Լալա՛, լավ լսեցի՞ր, գնա՛, վաղ էս վախտ էտ թոմար քեզեն հազիր կ'ուզեմ։

Լալեն գլուխ կախած, սև ու սուգ մտած էլնում էրթում է թագավորի թամբեհը կատարելու։ Հ'էգսի օր ամենը թամ-դրուս Լալեն հազրում է։

Տղեն գալում է հորողբոր մոտ, ասում է.— Թոմարները հազը է, հիմի ի՞նչրխ անեմ։

— Կառնես դահոլ զուռնեն, թոմար քաղքի կնկտիք, կէրթաս ծովի վրեն, էնտի չալել կտաս, կնկտիքն էլ պար կ'բռնեն, կը խաղան։ Ծովի աղջկերք կ'իմանան դահոլ զուռնի ձեն, ծովից կելնեն դուքան ձեր հետ ինչունի իրկուն պար կը խաղան։ Աղջկների էրկուսը կարգած, են պղդիկը աղապ է։ Իրկուն էնոնք գուզեն հետ էրթան, դու

[1] Կարել (Ս. Բ.)։

կասես. «Ներողություն, հ՞ուր եք էրթում, հալա մենք ձեզի խալաթ պտի բերեինք, ամա մոռացանք, դուք էրկուսդ գնացեք, թող ձեր պզդիկ քուրը մնա ձեր խալաթները բերե»։ Էնոնք կէրթան, պզդիկ քուրոջը կը թողնին ձեր մոտ, դուք կառնիք գուքաք։

Տղեն հ՞էգսի օր իր թոմարի սարքով ելավ գնաց դիպա ծով։ Հասավ ծովի մեջ տեղ թե չէ, դահոլ զուռնեք բաշլաեցին չալղի անել, կնիկներն էլ պար բռնեցին ու խաղցան։ Տղեն մեկ էլ տեսավ, որ ծովի միջից իրեք հատ հրեղեն, արևի պես սիրուն աղջիկներ էկան մտան պար ու սկսեցին խաղալ։ Տղան վեր ելավ տեղից, աղջիկներին պատվեց, ինչունի իրիկուն խաղցան։ Աղջկներ հ՞ուղեցան էլի իրանց տեղը էրթալ։ Տղեն ասում է.— Ներողություն, դուք առանց խալաթի ո՞ւր եք էրթում։ Դուք որ մեզի պատվեցիք, էկաք մեզ հետ պար խաղալու, մենք ձեզի հորե՞նց առանց խալաթի ճամբու դնենք։ Մենք որ գիտնայինք, թե դուք էլ եք դալում պար խաղալու, թագավորից ձեզ լավ-լավ խալաթներ կը բերեինք։ Դուք էրկու մեծ քուրերդ որ էրթում եք, թող ձեր պզդիկ քուրը մնա, ձեր խալաթները բերի։

Ծովի աղջիկներ համոզվան, էրկուսը գնացին, մնաց ազապ քուրը։ Տղեն գյամու գլուխը դառուց, քշեց էկավ հասավ քաղաք, աղջիկը բերեց տվեց թագավորին։

Թագավոր ծովի աղջկան որ տեսավ՝ խելքը գնաց։ Լալին հրամայեց որ էրթա, տղին իրա կշռնոտով մեկ օսկի տա։

Լալեն առավ տղին, տարավ իր տունը, բերեց մի փարա տվեց ու նարդիվնի գլխից որ մի թագմիկ չտվե՞ց, տղեն թանգիր-մանգիր նարդիվնից ցած իջավ, մի կողքը կոտրավ։

— Դե՜հ, գնա քեֆ արա՛, իմ ծախսով օսկե գյամի շինել կտա՞ս, տարար իշթե քու կշռնուտով օսկին, կերածդ անուշ էղնի։

Տղեն հ՞ելնում գալում է տուն։ Բերում մեկ փարեն տալում է մորը.— Առ էս փարեն պահե, մեկ օր պետք կգա։ Աստուծ քու բալեն տա, որ դու ընձի կրակը չը քցեիր։ Լալեն էս անգամ էլ հախիս տեղ կողքս կոտրեց։

Տղայի կողքը կապում են, լավանում է։

Թագավորը բանից խաբար չէ։ Գիտե թե Լալեն տղի հախը տվել է։ Հելնում էրթում է, որ աղջկան բերե, հետը պսակվի։

Աղջիկը ասում է.—Ինչունի իմ ձին էլ չբերես ես քեզ հետ պսակվողը չեմ, թե չէ քու թագավորությունը տակն ու վրա կանեմ։

Թագավոր էլի գալում է Լալի մոտ։

Լալեն ասում է.—Հորթարած տղան որ չը բերե ձին, էլ վո՞վ կարա բերել։

Թագավոր էլի կանչել է տալում տղին ու ասում է.— Կէրթաս ծովի միջից աղջկա ձին կը բերես, թե չէ գլուխդ զարնել կուտամ։

Տղան անճար ու շվար դառնում գալում է տուն։

Շատ է մտածում թե. «ես մոնց անեմ որ էս թագավորի ձեռքից ազատվիմ»։

— Ախ մե՛ր, աստուծ քու բալեն տա, որ դու ընձի կրակը քցեցիր ու չեմ կրնա ազատի։ Հիմի էլ թագավոր ասում է իլլահի պտի էրթաս ծովի աղջկա ձին բերես։

Տղան էրթում է հորողբոր մոտ.— Հորողբեր, դու գիտես, ընձի էս կրակից ազատե։ Թագավոր հիմի էլ ասում է. «Գնա աղջկա ձին բեր»։ Ես չգիտեմ թե մո՞նց անեմ, որ թագավորի ձեռից ազատվիմ։

— Ես գիտեմ օրթի, դու սոնղը իմ գլուխս էլ դուրս պտի տաս։ Դե՛հ, բարի էտպես է, կէրթաս թագավորին կըսես քառասուն հատ օշխըրի փոստ տա, սև ձութ, մեկ էլ ձիու գյամը, աղջկա ջանի վրեն է, առ ու արի իմ մոտ։

Տղեն էրթում ասում է.— Թագավոր ապրած կենա, ինձի կը տաս քառասուն հատ օշխրի փոստ, բավական սև ձութ ու մեկ էլ ձիու գյամը աղջկա մոտն է, տվեք, էրթամ ձին բերեմ։

Էրթում աղջկա մոտեն գյամը առնում բերում են, քառասուն օշխըրի փոստ, մի խելի էլ սև ձութ տալում են տղին, տղեն առնում գալում է հորողբոր մոտ։ Տղան բերում քառասուն փոստն էլ ձթով կպցնում է հորողբոր լերթին ու էրթում են ծովի քանարը։

Հորողբեր ասում է տղին.— Դու կառնես գյամը ու կը մտնես քարի տակ, ես բարձր ձենով կը խրխնջամ, ձին խրխնջալով ծովից դուրս կը գա, դու շտապոք քարի տկից դուրս կը գաս ու գյամը կանցուս ձիու գլուխ։ Թե որ քիչ մը հ՞ուշ տավրամիշ էղար, ձին ընձի կտոր-կտոր կոնե։

Տղեն թաքնվում է քարի տակ, հորողբեր մի երկու անգամ բարձըր խրխնջաց, տղեն տեսավ ծովը խառնվավ իրար։ Մեկ էլ որ խըրխընջաց, ձին գլուխը դուրս հանեց ջրից։ Հորողբերը մեկ էլ որ խըրխընջաց, ձին դուրս ելավ ու բերան քցեց ըխտիարին, էն կողմեն տղեն էլ մաճալ չտվեց, թռավ ու գյամը անցուց ձիու բերանը։ Ձին վեր-վեր թռավ, դես քաշեց, դեն քաշեց չըկրցավ տղի ձեռքից ազատվեր։ Բռնեցին ձիուն բերին տուն։

Տղան ձին տարավ տվեց թագավորին։ Թագավորը Լալին հրամայեց, որ տղին իր կշռնոտով մեկ օսկի տա։

Լալեն տարավ տղին, օսկին էլի իրան վերցուց, մեկ փարա տվեց տղին, ու մի թագմիկ որ տվեց, տղեն նարդիվնից վեր ըն-

կավ, մեկ ոտը կոտրավ։ Տղեն կաղալեն գնաց հասավ տուն։ Մնղճի բերին ոտքը կապեց, լավացավ։ Տղեն ելավ կամաց-կամաց ման էր գալում։

Ծովի աղջիկը, որ թագավոր բերել էր տված, շատ իմաստուն էր։ Թագավոր ուզեց պսակվել, աղջիկը ասում է.— Դու անաստուծ մարդ ես, ես քեզ հետ ի՞նչրխ պսակվիմ։

Թագավոր ասում է.— Դու իմ ի՞նչ անաստուծթինը տեսար, որ ասում ես։

— Դու որ անաստված չըլլիս, էն տղան, որ քեզ էտղտար լավութուն արեց, դու էնոր ի՞նչ փեշքաշ տվիր։

Թագավոր զարմանում է.— Դու ի՞նչ ես ասում, ես ամեն անգամ մի մի խազնա օսկի եմ տված, մո՞նց թե բան չեմ տված։

— Էն Լալեն, որ դու ամեն հեղին թամրիհ էիր անում թե. «Գնա օսկի տուր», ինքը էրթում օսկին իրան էր վերցնում, մեկ փարա էր տալում ու ամեն անգամ զարկում նարդիվնից ցած էր քցում։ Մեկ անգամ թևն է կոտրած, մեկ անգամ կողքը, էս անգամ էլ ոտքը։

Թագավոր մարդ է ղրկում տղի հետևից, տղեն բանը հասկանում է, առնում է մոր մոտեն էն իրեք փարեն ու էրթում է թագավորի դիվանը։

Թագավորն ասում է.— Ա՜յ տղա, ես որ Լալին հրամայում էի, որ քեզի քու կշռնոտով մեկ օսկի տա, Լալեն ի՞նչ էր տալում քեզ։

— Թագավոր ապրած կենա, Լալեն ութայի անգամ էս մեկ փարեն տվեց իմ հախը, թագմիկով էլ տվեց նարդիվներից ցած քցեց, թևս կոտրեց։ Մյուս անգամ էս մեկ փարեն տվեց, էլի քցեց կողքս կոտրեց։ Վերջին անգամ էլի էս մեկ փարեն տվեց, էս անգամ էլ քցեց ոտքս կոտրվավ, չեք հավատում, տեսեք կոտրած տեղերը։— Ասում է ու իրեք փարեն էլ քցում է մեջ տեղը։

Թագավոր հրամայում է, որ Լալի գլուխը զարնեն։ Ինչքան որ հարստութուն ունի տան հորթարած տղին։ Բազում փարա էլ ինքը տվեց, իրա Լալի պաշտոն էլ էնոր տվեց, նոր գնաց պսակվավ։

Օխտն օր, օխտ գիշեր դահոլ զուռնա տվին խաղցան, կերան, խմին։ Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։